ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-02-62,
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.ombuds.am

№ _____

«_____» _____2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ազգային ժողովի մեծարգո՛ նախագահ,

Տեղեկացնում եմ, որ հրապարակվել են 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը և Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2024 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը:

Պաշտպանի տարեկան հաղորդումն ու տարեկան զեկույցն ամփոփում են նախորդ տարվա ընթացքում ՀՀ ՄԻՊ հաստատության գործունեության արդյունքները, առանձին ոլորտներում առկա խնդիրների մասին վերլուծությունները, ինչպես նաև դրանց հաղթահարման առնչությամբ Պաշտպանի առաջարկները:

Պաշտպան Անահիտ Մանասյանը հատուկ կարևորում է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում արձանագրված խնդիրների լուծման նպատակով ներկայացված առաջարկների իրացման ուղղությամբ իրավասու մարմինների հետ պատշաճ համագործակցությունը: Ներկայացված առաջարկների վերաբերյալ տարվա ընթացքում Պաշտպանի նախաձեռնությամբ անցկացվելու են թիրախային քննարկումներ՝ իրավասու մարմինների և քաղաքացիական հասարակության ներգրավմամբ:

Կից ուղարկում եմ տարեկան հաղորդումն[1] ու տարեկան զեկույցը[2]:

Առդիր՝ 2 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

[1] Հասանելի է նաև https://ombuds.am/images/files/6c41419336f6066fc96f72f343f4b0f3.pdf հղումով:
[2] Հասանելի է նաև https://ombuds.am/images/files/d5710fc4f92befa5d09747c30bdf3c41.pdf հղումով: